



**Սամվել
ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պարզամտ: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից առ այսօր աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի պաշտոնները: Ներկայում պաշտոնավարում է որպես ավագ փորձագետ: Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

**ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՆՏԵՍԱՆԵԼԻ «ԽՈՒԹԵՐԸ»**

Հիմնաբառեր. բնակչություն, պարեն, անվտանգություն, ինքնաբավություն, հաշվեկշիռ, անհամապատասխանություն, կրկնակի հաշվարկ

Անվանի հոգեբան Աբրահամ Մասլոուն 1954 թվականին իր «Դրդապատճառ և անձ» աշխատության մեջ ներկայացրեց պահանջմունքների աստիճանակարգման համակարգն ու հիմնավորեց, որ մարդու ամենաառաջնային պահանջմունքները բնագրային են: Ահավասիկ, ամբողջ կենդանական աշխարհում նորաձինն անմիջապես գտնում է մոր կուրծքը, սնվում, իսկ հետո տաքանալով՝ քուն մտնում: Ահա թե ինչու՝ Մասլոուի պահանջմունքների բուրգի հիմքում ֆիզիոլոգիական և կենսաբանական պահանջմունքներն են, որոնցից հատկապես կարևորվում է սնվելը՝

Մարդկային հասարակությունում պարենային ապահովվածությունը կամ հանապազօրյա հացը մեծ դեր ունի ինչպես անհատի, այնպես էլ ընտանիքի, երկրի և մոլորակի կյանքում: Պարենային անհավասար ապահովվածությունը հանգեցնում է միջանձնային և, անգամ, միջազգային բախումների, խաթարում կայուն զարգացումը: Ի վերջո, պարենային անվտանգությունն ազգային անվտանգության ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, որի ապահովմանն է միտված պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Յուրաքանչյուր պետության ազրարային հատվածի հովանավորման, պարենի և գյուղատնտեսական հումքի արտաքին առևտրի կանոնակարգման, ինչպես նաև բնակչության եկամուտների ավելացման քաղաքականությունը պարենային անվտանգության ապահովման հիմնական գործիքակազմն է:

Դեռևս 18-րդ դարի վերջին անգլիացի տնտեսագետ

¹ Пять основных категорий потребностей по Маслоу, <https://dongji.ru/piramide-maslou/>

Թովմաս Մալթուսը բացահայտեց², որ աշխարհի բնակչությունն աճում է երկրաչափական, իսկ պարենամթերքի արտադրությունը՝ թվաբանական պրոգրեսիայով: Ըստ վիճակագիրների՝ մեր թվարկության սկզբին աշխարհի բնակչությունը բաղկացած է եղել ընդամենը 300 մլն մարդուց: Եթե առաջին հազարամյակում այդ թիվն ավելացել է 30 միլիոնով, ապա երկրորդ հազարամյակի վերջին՝ 1999 թ. հոկտեմբերի 12-ին, հասել է 6 միլիարդի սահմանը, իսկ ընդամենը 12 տարի հետո՝ 2011 թ. հոկտեմբերի 31-ին, գերազանցել 7 միլիարդը: Համացանցում նայեք «Աշխարհի բնակչության հաշվիչին» և կհամոզվեք, թե ինչ արագությամբ է ավելանում բնակչության թիվը: Դիցուք՝ 2019 թ. հոկտեմբերի դրությամբ այն մոտեցել է 7,743 միլիարդին³, իսկ 2050 թ., ՄԱԿ-ի կանխատեսմամբ, կհասնի 9.1 միլիարդի⁴: Սա լուրջ մարտահրավեր է, ուստի ՄԱԿ-ը և՛ Հազարամյակի զարգացման ծրագրում (2000 թ.), և՛ Կայուն զարգացման (2015 թ.) ծրագրում առանձնահատուկ շեշտադրում է տվի և աղքատության հաղթահարման, առողջ ապրելակերպի և մաքուր ջրի ապահովման խնդիրները:

Հայաստանի Հանրապետությունը դեպի ծով ելք չունեցող և տարածաշրջանային հակամարտությունների պատճառով արտաքին հաղորդակցության սահմանափակումներ ունեցող երկիր է: Ահա թե ինչու՝ պարենային անվտանգության դասական մոտեցումը՝ պարենի տնտեսապես արդյունավետ արտադրության և ներկրման համադրումով բնակչության պահանջ-մունքի բավարարում, չափազանց ռիսկային է: Ուստի նախապատվությունը պետք է տալ պարենային անկախության, այսինքն՝ ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Զուտ շուկայական առումով, այս մոտեցումը խոցելի է, քանի որ պահանջում է ագրարային ոլորտի պետական աջակցության ծավալների այն աստիճանի ավելացում, որ տեղական ար-

տադրության պարենը ներկրվածի համեմատ ավելի մրցունակ լինի: Ինչպես բյուջետային հնարավորությունների, այնպես էլ միջազգային պարտավորությունների առումով, լրահատկացումների (սուբսիդավորման) ծավալները նույնպես անսահմանափակ չեն: Դիցուք՝ արտաքին առևտրի կանոնակարգման նպատակով Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), որին ՀՀ-ն անդամակցել է դեռևս 2003 թ. փետրվարին, սահմանափակում է անդամ երկրների գյուղատնտեսության ապրանքամետ (մինչև 5%) և արտահանման սուբսիդավորումը (0%): Բացի այդ, Հայաստանի սպառողները, ի թիվս շատ այլ արտադրատեսակների, պարենային ապրանքներից գերադասում են տեղական արտադրությանը: Այսինքն՝ այս պարագայում սպառողների նախապատվությունը բավարարելը նույնպես դարձել է պարենային անվտանգության գործոն: Բոլոր դեպքերում հետևությունը մեկն է՝ ՀՀ-ն պետք է իրականացնի առավելապես պարենային ինքնաբավության վրա հիմնված պարենային անվտանգության քաղաքականություն:

Ամենապարզ ձևակերպմամբ՝ պարենային անվտանգությունը երկրի տնտեսության այն վիճակն է, երբ առկա է անհրաժեշտ քանակությամբ ու տեսականու պարենի առաջարկ, և բնակչությունն այն ձեռք բերելու հնարավորություն ունի⁵: ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է, որ երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության զարգացման այնպիսի մակարդակ, որը երաշխավորում է բնակչության առողջ և ակտիվ կենսագործունեության համար առողջապահական (ֆիզիոլոգիական) նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը⁶: Այսինքն՝ երկրի պարենային անվտանգության առաջին նախապայմանը կենսականորեն կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության ան-

² Взгляды Томаса Мальтуса, <https://helpiks.org/6-74935.html>

³ <https://countrymeters.info/ru/World>

⁴ https://pikabu.ru/story/oon_prognoz_naseleniya_zemli_k_2050_godu_6158557

⁵ Սամվել Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները: Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, էջ 16:

⁶ «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=1113>

հրաժեշտ մակարդակի (ինքնաբավության) ապահովումն է, ներմուծման հաշվին՝ պակասորդի լրացումը և պետական պարենային պահուստների ստեղծումը: Երկրորդ նախապայմանը բնակչության բոլոր խավերի առնվազն ֆիզիոլոգիական նվազագույն պահանջներին համապատասխանող սննդի տեսականու ձեռքբերման տնտեսական հնարավորությունների ապահովումն է, իսկ երրորդը՝ օգտագործվող սննդամթերքի անվտանգությունը:

Բնակչության պարենային ապահովության համար անհրաժեշտ հիմնական արտադրանքների արտադրության և ներմուծման ծավալների, ինքնաբավության մակարդակի, պահուստների և այլ կարևոր ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի (ՀՀ ԱՎԿ) եռամսյակային ու տարեկան պարբերականությամբ հրապարակվող պարենային հաշվեկշիռը: Վերջինս ՀՀ ԱՎԿ «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման ամենակարևոր բաժիններից մեկն է, որ ներկայացնում է տեղեկություններ բուսական ու կենդանական ծագման մոտ 50 պարենային ապրանքների արտադրության և օգտագործման, ինչպես

նաև ինքնաբավության վերաբերյալ: 2010-2017 թթ. առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակն արտացոլված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ ՀՀ-ում հատկապես պարենային ցորենի, բուսական յուղի, հավի և խոզի մսի ինքնաբավության մակարդակը ցածր է: Մեր կարծիքով՝ իրականությանը մոտ չէ նաև շաքարի ինքնաբավության ցուցանիշը: Ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2017 և 2018 թվականներին շաքարավազի տեղական արտադրությունը համապատասխանաբար՝ 48,63 և 57,99 հազ. տոննա է⁷: Միաժամանակ, ըստ մաքսային վիճակագրության հաղորդման, երկիր է ներմուծվել 110,64 և 81,97 հազ. տոննա շաքար⁸: Փաստորեն, նշված տարիներին շաքարի ամբողջական առաջարկը համապատասխանաբար՝ 159.27 և 139.96 հազ. տոննա է, ինչն անհավանական է:

Ի տարբերություն մաքսային վիճակագրության, ՀՀ ԱՎԿ-ն ներկայացնում է, որ 2017 և 2018 թվականներին շաքարի ներմուծումը կազմել է համապատասխանաբար՝ 28,8 և 30,2 հազ. տոննա⁹, որը նույնպես անհավանական է, քանի որ երկրի, եթե ոչ միակ, ապա ամենախոշոր՝

Առաջին անհրաժեշտ պարենամթերքի ինքնաբավության մակարդակ¹⁰, %

ԱՂՅՈՒՍԱԿ 1

| Առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերք | Տարի | | | | | | | | | |
|---------------------------------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|--------------|--------------|--------------|--------------|--|
| | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | |
| Ցորեն | 33.7 | 36.5 | 32.9 | 46.8 | 48.7 | 49.5 | 53.2 | 33.2 | 31.5 | |
| Կարտոֆիլ | 100.6 | 98.2 | 99.0 | 102.5 | 101.1 | 102.1 | 101.3 | 102.6 | 102.6 | |
| Քանցարեղեն | 98.2 | 98.2 | 99.3 | 99.5 | 99.1 | 100.3 | 103.1 | 102.5 | 104.7 | |
| Միրգ (բացի խաղողից) | 80.8 | 90.0 | 96.1 | 99.6 | 93.8 | 102.1 | 98.1 | 109.7 | 108.9 | |
| Հատիկաղնդեղենային նշակաբույսեր | 41.7 | 47.3 | 56.0 | 54.3 | 51.9 | 58.2 | 61.6 | 49.7 | 38.6 | |
| Բուսական յուղ | 4.1 | 2.8 | 9.1 | 15.1 | 13.2 | 7.8 | 5.6 | 4.3 | 2.2 | |
| Շաքար | 24.6 | 43.9 | 93.1 | 92.6 | 93.1 | 89.6 | 91.4 | 65.2 | 68.6 | |
| Ձու | 99.2 | 94.1 | 99.5 | 96.3 | 97.2 | 99.5 | 99.4 | 98.2 | 99.5 | |
| Կաթ (բացի կարագից) | 97.2 | 82.9 | 83.1 | 85.0 | 84.2 | 93.0 | 88.6 | 91.2 | 86.8 | |
| Տավարի միս | 84.8 | 78.4 | 81.6 | 86.2 | 87.9 | 92.3 | 92.5 | 91.5 | 89.2 | |
| Խոզի միս | 39.9 | 43.3 | 38.3 | 46.0 | 54.2 | 57.8 | 64.1 | 58.0 | 53.3 | |
| Ոչխարի և այծի միս | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 103.4 | 107.7 | 133.8 | 138.9 | 128.6 | |
| Հավի միս | 12.3 | 12.2 | 19.1 | 19.8 | 20.0 | 21.8 | 28.5 | 22.5 | 26.6 | |
| Խաղող | 101.1 | 101.4 | 102.6 | 102.0 | 101.9 | 101.2 | 119.3 | 106.4 | 104.8 | |

⁷ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2112>

⁸ <http://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIIImportStatistics>

⁹ https://www.armstat.am/file/article/f_sec_2_2019_3.pdf

¹⁰ Հաշվարկվել է <https://www.armstat.am/am/?nid=82&id=2125> –ի համապատասխան տարիների «Պարենային ապահովումը և աղքատությունը հովար-դեկտեմբերին» հրապարակման տվյալների հիման վրա:

Ախորյանի շաքարի գործարանը գրեթե չի աշխատել: Ավելին, ըստ պարենային հաշվեկշիռների, ներառյալ՝ տարեվերջի պահուստը, 2017 թ. շաքարի օգտագործված քանակությունը կազմել է 83,3, իսկ 2018 թ.՝ 104,4 հազ. տոննա: Հարց է ծագում՝ որն է այս հանելուկի պատասխանը: Կա ևս մեկ հարց՝ եթե անգամ Ախորյանի գործարանը միայն ներմուծվող հումքով շաքար արտադրի, մի՞թե կարելի է համարել, որ Հայաստանը շաքարով ինքնաբավ է:

Նշված երկու վիճակագրական աղբյուրներում նկատելի շեղում կա նաև ցորենի և այլ պարենային ապրանքների ներմուծման ցուցանիշներում:

Մեր տարբեր հրապարակումներում արժարժվել է կրկնակի հաշվարկի հետևանքով Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պարենային հաշվեկշիռների անճշտությունների հարցը¹¹: Որպես ինքնիշխան պետություններ՝ ՀՀ-ն և ԱՀ-ն իրականացնում են ինքնուրույն տնտեսական քաղաքականություն, և միջպետական միասնացումը հիմնականում ուղղորդված է այդ քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Այս մոտեցումը միանգամայն տրամաբանական է, սակայն կան մի շարք տնտեսական ցուցանիշներ, որոնց հաշվարկման համար անհրաժեշտ է ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում: Ահավասիկ, նշված երկու երկրի պարենային հաշվե-

կշիռների վերլուծությունը ցույց է տալիս, որ ազգային վիճակագրական ծառայությունները դրսևորում են ստանդարտ վերաբերմունք՝ հաշվի չառնելով մաքսային սահմանի բացակայության, միևնույն ազգային արժույթի գոյության և ընդհանուր շուկայի գործոնները, որոնք պաշտոնապես չգրանցված առևտրի պայմաններ են ստեղծում: Վերջինիս հետևանքով պարենային անվտանգության իրական պատկերը գնահատելիս ի հայտ են գալիս մի շարք դժվար հաղթահարելի «խութեր»: Նախ՝ ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեն պարենային ապահովվածության ցուցանիշները որոշելիս հաշվի չի առնում այն փաստը, որ պարենային ռեսուրսի մի մասը սպառվում է ԱՀ-ում: Միաժամանակ, ՀՀ բնակչության սպառած պարենում իր որոշակի չափաբաժինն ունի արցախյան ծագման արտադրանքը, որը ՀՀ ԱՎԿ-ն չի ներառում պարենային հաշվեկշռի ներմուծման բաժնում: Ուստի ՀՀ և ԱՀ պարենային շուկայի և պարենային անվտանգության իրական ու ամբողջական պատկերը ներկայացնելու համար անհրաժեշտ է կան վերանայել պարենային հաշվեկշռի կազմման մեթոդաբանությունը, կան, որպես այլընտրանք, կազմել միասնական պարենային հաշվեկշիռ և իրականացնել պարենային շուկայի կարգավորման միասնական քաղաքականություն:

¹¹ Սամվել Ավետիսյան, Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հրատապ խնդիրները: Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, 96 էջ: Ս. Ավետիսյան, ՀՀ և ԱՀ միասնական պարենային հաշվեկշռի կազմման հիմնական սկզբունքները, ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր, «Տնտեսագետ» հրատ., 2014: